

5

Ե Ր Օ Շ Լ Գ Ի

158

IV

ՀՐԵՇՏԱԿԻ ԽՈՍՏՈՒՄԸ

Թարգ. և ռուսերէնից

Ա. Ս.

Հ ր ա տ. № 1

8

433

Եստրադնի „ՇԵՐԵՆԿԻ“ միջնակարգ դպրոց,

1886

14. 2. 2. 2.

14. 2.

2011

2003

3
Ա. 33

800
78-III

ԵՐՈՇԼՊԻ



ՀՐԵՇՏԱԿԻ ԽՈՍՏՈՒՄԸ

Թուրք. ուսուցիչից
Ա. Ս.



Տպարան „ՇԻՐԱԿ“ Ալեքանդրապոլ

1806
(38)

30374-42



Дозв. Цензурою, 30 Января 1906 г. гор. Тифлисъ



12950-589



ՀՐԵՂՏԱԿԻ ԽՈՍՏՈՒՄ Ը

1001
138

Գարնանային ջերմ արեր յայտնորում է մի խղճուկ բնակարան բաղարի ծայրում: Ուրախ դուարժ ճառագայթները թռչկոտում են մի տեղից միւս տեղը: Նրանք բարձրանում են մահճակալի վրայ, թափանցում կեղտոտ մատրաքը (խոտիւռ), սակայն գտնելով այնտեղ միայն չոր յարդ, չստպով յետ են դառնում, սահում պատառտում վերմակի վրայով դէպի բարձր և այստեղ մի րոպէ կանգ առնում, զիտելու այն երեք երեխաներին, որոնք անհոգ բնած են, թէև արնն արդէն բաւական բարձրացել է: Պատի մօտ պառկած է մի տաք տարեկան նիհար տղայ, նրա կողքին, իրար գրկած բնած են երկու փոքրիկ աղջիկ, որոնցից մէկը դեռ երեք տարի էլ չէ ապրել այս փուն աշխարհում: Միւսը, նրանից մեծը, իր նիհար ձեռներով գրկել է փոքր բրոջ

վրդով ու տեսնում են երազում, սվ գիտէ, որ-
պիսի երջանիկ և առասպելական երկրներ: Ճա-
ռագայթները ըստպէս խաղում են նրանց գու-
նատ այտերի վրայ, յետոյ թռչկոտում աթոռնե-
րի վրայ, այնտեղից իջնում դէպի յատակը և
գտնում անկիւնում մի փայտեայ արկղ, որի ներ-
սը շինուած են ինչ որ դարակներ: Այտեղ էլ
նրանք ոչինչ չեն գտնում, բացի, ունկերը կո-
տրուած երկու գաւաթից և ապսէում դրած մի
քանի շորացած ձկներից: Ճառագայթները շա-
րունակում են իրենց գիտողութիւնը, բայց օրով-
հետեւ սենեակում գիտելու ուրիշ առարկաներ
չկան, նրանք փոքր ինչ խաղալով սեղանի վրայ,
որ գրուած էր մի գատարկ սափօր, կրկին վի-
րադառնում են դէպի պատուհան, այնտեղից դէ-
պի բակը և ապա անցնում աւելի լաւ տեղեր:
Ստուերը իջնում է սենեակի վրայ:

Միջին տարիքի մի գունատ երես կին գրագ-
ւած է պիտայի մօտ ինչ-որ գործով: Նրա գէմ-
քը գեղին է ու տանջուած, ստիւնքները ցամբած
և շնչառութիւնը ծանր: Ընտանիքի մեծ երեխան,
13 տարեկան մի աղջիկ, աւելում է յատակը:

— Մայրիկ — ասաց նա յանկարծ, թողնե-
լով աշխատանքը. «Ժամանակը չէ, չգարթեցեմ
եղբօրս և փոքրիկ քոյրերիս. երբ ես գուրս էի գնա-

ցել, ժամացոյցը արդէն 9-ն էր ցոյց տալիս»:

— Թող, դեռ քնիւն, Այլի», պատասխանեց
կինը ցածր ձայնով, «այդտեղ գնէ քաղցածու-
թիւն չեն զգում: Նրանք որ վարթեն մի պուտ
կաթ անգամ շունենր նրանց տալու»: Եւ ար-
ցունքները վազազոյզի գլորում են այտերի
վրայով:

— Ապա նայիր, մայրիկ», շարունակում է
աղջիկը, «ինչպէս Լիզան ու Սայման փաթաթ-
ուած քնել են: Սայման կարծես իր փոքր քրոջը
պաշտպանում է մէկից, որ սուղում է նրան ինչ
որ վատութիւն անել»:

— Ժեղճ Լիզան երէկ երեկոյեան շատ քաղ-
ցած էր, բայց ախր ոչինչ չկար...» պատմում է
մայրը և ձայնից յայտնի է, որ արցունքները
պատրաստ են դուրս թափուելու, բայց նա զըռ-
պում է: «Սայման յետոյ համոզեց նրան, տոե-
լով որ եթէ հանդիստ մնայ և լաց չը լինի, գի-
շերը բարի հրեշտակը քաղցր կարկանդակներ
կրերէ և կտայ այնքան, որքան ցանկանում է,
այնպէս որ նոյն իսկ առաւօտը երկար ժամա-
նակ քաղցածութիւն չի զգայ: Այսպէս նա իր
խոտոտմներով հանգստացրեց նրան և ինքն էլ
քնեց, թէև անշուշտ նրա ստամոքսն էլ պատարկ
էր»:

Տիրեց րոպէական լուսթին: Այլին շարու-
նակում է աւելի յատակը, բայց շուտով նորից
թողնում է աւելը և հարցնում լացակամած:

— «Արդեօր հայրիկս այսօր աշխատանք կգտնի»:

— «Զգիտեմ, սիրելիս, բայց յոյս ունենանք դե-
պի լաւը: Նա երեւի շուտով կգայ գործատերի
մօտից»:

— «Գիտես, մայրիկ» — ասում է աղջիկը և ար-
տասուախառն աչքերը փայլում են, «ես կարծում
եմ, որ շուտով այս փոքրիկների համար կսկսուեն
լաւ օրեր, այն ժամանակ սրանք կտտանան քա-
ւականաչափ ամեն տեսակ ուտելիք: Գիտես,
անցեալ երեկոյ ես մի շատ լաւ երազ տեսայ
և խորը հաւատացած եմ, որ սա նախա-
գուշակում է լաւագոյն օրեր: Ես տեսայ մի սպի-
տակաթի հրեշտակ, որը ձեռներում բռնած ու-
նէր կարկանդակներով ի մի պսակուն օսկեայ
զաւաթ: Եւ ես ասացի նրան. սիրելի հրեշ-
տակ, թոյլ տուր մի քիչ կարկանդակ տանեմ
Արփի եղբօրս և Լիզա ու Սայմա քոյրերիս. նը-
րանք շատ բաղցած են, իսկ հայրս, ինչքան
շարժարունց ոչ մի գործ չգտաւ: Եթէ չես հա-
ւատում, հարցրու Աստծուն, նա անպայման կա-
սէ քեզ, որ ես ճշմարիտ եմ ասում: Հարցրու
նրան նոյնպէս թէ ինչո՞ւ նա թոյլ է տալիս, որ

մենք այսպիսի գառն աղբատուլիւն կրենք, այն
ինչ շատ հարուստներ այնքան երջանիկ են և
կրն հայրս ու մենք նոյնպիսի ազնիւ մարդիկ ենք,
ինչպէս այն հարուստները: Այո, հարցրու նրան
և յետոյ միւս գիշերը ասա ինձ թէ Աստուած
ինչ պատասխանեց դրան, ասացի ես: Բայց այդ
գեղեցիկ հրեշտակը միայն ժպտում էր և շուկով
ասաց. վաղը քո փոքրիկ քոյրերդ և եղբայրդ
իրանք անձամբ կարող են կարկանդակ վերցնել
այս գաւաթից: Բայց այստեղ ես արթնացայ,
թէի աղում էի աւելացնել, թէ մայրս և ես
նոյնպէս բաղցած ենք: Չարմանալի երազ է, չէ՞
մայրիկ»:

— «Այո, շատ զարմանալի... Բայց ինչո՞ւ հայ-
րըդ այսօրան ուշացաւ: Անշուշտ նա գործ է զը-
տել և ռոճիկից նախափճար վերցրել: Զատ կա-
րելի է մեզ համար ստեղծու բան բերէ», և ու-
րախաւթիւնը փայլեց նրա փոս ընկած աչքերում:

Մրահում լուում են քայլերի ձայներ: Երկուսն
էլ վեր են թռչում: Նրանց գէմբերը արտայայ-
տում են լարուած պաշտօնգութիւն: Ներս է մտ-
նում մի տղամարդ: Գունատ է նրա գէմբը, ինչ-
պէս կտաւ, շրթունքները գողգողում են, հա-
յնացրը մոայլ է:

— «Մի՞թէ չեղաւ... մի՞թէ այժմս էլ...» Բղա-

ւում է կինը և բարձրաձայն լաց լինում: Ամուսինը չէ պատասխանում, գլխարկը շարժում է սեղանի վրայ և նստում... Գլուխը կամաց-կամաց խոնարհւում է գէպի ձեռները: Նա մի բարձրահասակ, խիտ մորուքով, փոքր ինչ կուզը գուրս ընկած, բայց առողջակազմ, տղամարդ է:

Լուսթինն է: Լուսում են միայն կնոջ հեկեկանքները և քնած երեխաների չնշառութիւնը:

Ամուսինը գլուխը բարձրացնում է: Նա հայեացքը ձգում է նախ կնոջ վրայ, որ կուշ եկած նստել է աթոռի վրայ և ապա ազդեան, որ լուռ ու մունջ չոքել է մօր առաջ: Ապա հայեացքը ձգում է մահճակալին, աչքերը լցւում են արցունքներով, արտայայտութիւն ամբողջապէս ընկճուած է: Նա ծածուկ լծկով սրբում է արցունքները:

Բայց յանկարծ նրա կուրծքը ուռչում է, երեսի երակները լցւում են արիւնով և բերանից գուրս են թափւում սոսկալի անէծքներ:

Անցնում է մի քանի րոպէ: Նրա երեսը բնդունում է մի անբացատրելի արտայայտութիւն: Նա, ըստ երեւոյթի, մի ինչ որ բան վճռեց: Եւ, կարծես, թէ հեղինական ժպիտը խաղում է նրա երեսին: Ցածր ձայնով նա ասում է:

— Մեկ վանդեցին այստեղից — պէտք է տե-

ղափոխուինք»: Լուսում է անզուսպ լաց: Կինը տխուր ձայնով հարցնում է. — «2ֆ կարելի արդեօր նորից խնդրել տանտիրոջը, դուցէ զթայ»:

— «Արդէն փորձեցի: 2է օգնում: Նա միայն բզաւեց, «գուրս կորիւր փողոց քո երեխաներով»»: Եւ ես մի տասը տեղ գնացի բնակարան որոնելու, որա համար էլ այսրան ուշացայ, ամեն տեղ ինձ պատասխանում էին թէ շատ երեխաներ ունիս և համ էլ նախկին տանտիրոջ սենեակի վարձը չես վճարել»:

— «Եւ զճ երեխաներ» — հառաչեց մայրը:

— «Երբբու այս մարկան (ֆիննական փող), ասում է ամուսինը, ընկերոջիցս եմ փոխ առել, և զնա երեխաների համար ռետելու բան գնիր»:

Կինը վերցնում է փողը, թաշկինակը զցում գլխին և հեռանում: Երբ գուրս ծածկւում է, Այլին կամացուկ մօտենում է հօրը, փաթաթւում վզովը և դածր ձայնով ասում.

— «Մի տխրիր, սիրելի հայրիկ, ես մի շատ պարմանալի երազ եմ տեսել, որք անշուշա լուր բան է խոստանում: Ես տեսնում էի...

— «Այդ մի ուրիշ անգամ կպատմես, սիրելիս: Հիմա զնա, հարևանից մի քիչ թթու ջուր (квасъ) խնդրիր. հայրդ խմել է ուզում»:

Այլին վերցնում է գաւաթը և ուզում է՝ զը-

նալ. սակայն գեա դուռը շհասած, հայրը վերցնում է նրան ձեռների վրայ, ամուր սեղմում կրծքին և տղա բայ թողնում: Այլին դարձացած նայում է հօրը, ժպտում և հեռանում է:

Ամուսինը մնաց մենակ: Նա մտնում է մահճակալին և ջերմ համբուրում երեխաներին: Յետոյ երկու ձեռներով պինդ սեղմում է քոնքերը, կարծես տարութեան մէջ լինի: Նրա շըրթունքները գունատում են, գէմբը փայլում անսովոր կերպով: Մի վայրկեան ետ... և նա անկիւնից վեր է անում կացինը:

* * *

Սարսափելի գէպրի լուրը, որպէս մի անտառի հրդէհ, տարածուեց քաղաքում. և շուտով ժողովրդի մի ահազին բաղմութիւն շրջապատում է բանտարանի մի խղճուկ բնակարան, քաղաքի ծայրում: Բնակարանում դանում էին բժիշկը և ուսանողները: Խեղճ կիւր բազաքում արդէն լքում է եղելութեան մասին և կաթում ստանում. նրան տարան հիւանդանոց: Այլին բղաւում է գուրբը, որպէս մի վիրաւոր գազան: Բղաւում է սիրտ կտրատող ձայնով, «հայրիկ, Արփի, Լի-

զն, Սայմոն»: Բայց կամաց կամաց սարսափելի տանջանքը մեղցնում է նրա բանականութիւնը և լացի հետ լսում է սարսափելի ծիծաղ: Նրան դօրով հեռացնում են, թէև նա դիմադրում և կծոտում է: Բերանից թափւում է փրփուր և ատամներով կծած, արնաթաթախ լեզուն կախ է ընկել:

Ժողովրդի մէջ լսում են շշուկներ. «արդէն քերում են»:

Տխուր է այդ թափօրը: Առաջից տանում են երկու քրոջը. իրար գրկած պառկած են նրանք, այժմս էլ չեն ցանկացել նրանց բաժանել. այդպէս են ուզում թաղել: Մեծ քրոջ ձեռները, որպէս երկաթեայ ակցաններ, սեղմել են Լիզայի չորացած մարմինը: Նրկուսի գլուխն էլ կտրւած է: Արիւնն արդէն ցամաքել էր: Սակայն նրանց շրթունքներին սառել է մի գուրեկան ժպիտ, որովհետև նրանք այլևս քաղցած չեն:

Հրեշտակը կատարեց իր խտտումը և խեղճերը այժմ լաւ կլինին, ոչօրի չեն խանդարի, որովհետև այժմ գրանց տար գրկախառնութիւնը ընդմիշտ պատուաւարել է:

Նրանց յեանից տանում են տղային, որի գլխին մի ահազին վերք է բացւում: Եւ երբ փրջապէս երեաց գիւհս ողջ հօր մարմինը, հօր,

որ ուղանեց իր երեք երեխաներին և ապա իրեն
մահացու վէրք հասցրեց, ամբոխի մէջ լսուեցին
սոսկումի աղաղակներ: Բայց ամբողջ ժողովրդին
լուղում է մի անսովոր ու խորհրդաւոր զգաց-
մունք:

Նբա մէջ լսելի են ինչ որ վայրի, կա-
տաղի, մեղադրական բան:

Եւ լրագրական տեղեկատուները (репертеры)
շտապում են խմբագրատուն և յօդւածներ գրում
«անգութ հօր մասին», թէ և իսկապէս նրանք
կցանկանային գրել «աւելորդ գլխութեան մասին»:

Տխուր թափօրը անցնում է աւելի հեռու:
Բարձրանում է թեթիւ քամի և օրորում այգու
ծառների ճիւղերը: Փոքր առ փոքր նա փոխւում
է փոթորկի: Փողոցում բարձրանում են փոշու-
սիւններ և երկնքում կուտակւում են սև ամպեր:

Եւ երբ թափօրը անցնում է այն հարուստի
տան մօտից, որ վերջին անգամ մարդասպանին
մերժել էր աշխատանք տալը, ուղեկցող աֆրոխի
մէջ լսում է խուլ բողբ և բոլորը նկատում են,
ինչպէս գունատ գէմբը հեռանում է պատուհա-
նից:

Քամին սոււնում է: Եւ կարծես դատաւար-
ութեան երգ է երգում:

Երբ մօտենում են այն շինութեանը, ուր ապ-
րում էր հարուստ տանտէրը, որը դուրս էր ա-
րել մարդասպանին բնակարանից. բոլորը տես-
նում են ինչպէս շփոթուած մարդը դարպազի
միջով փախչում է դէպի բազը:


Փոթորիկը գառնում է աւելի ու աւելի կա-
տաղի:

Կուտակւում են երկնքում ամպերը և մեղա-
ւոր աշխարհի վրայ թափւում է յորդ անձրև:

Վ Ե Ր Ջ



Handwritten text, mostly illegible due to fading and bleed-through from the reverse side. The text appears to be organized into several lines, possibly a list or a series of entries.



3
120 13

ՀՀ Ազգային գրադարան



NL1600114

